

պատմութիւնը արդարացումն էր այդ վարկածին: Անիկա
չէր գիտեր, որ ժամանակակից կարգերուն մէջ բա-
նաստեղծը ամէնէն տխուր սպասներուն իսկ անարժան
կը գտնենք մենք ու շատ-շատ, թուրքերուն նման, չէզոք,
անկարեւոր գօտիներու վարչութիւնը կը վստահինք ա-
նոնց, երբ իբր անբաղձալի աքսորի ալ չենք դատա-
պարտեր, գլուխուն փաթթելով բարբարոս գաւառ մը,
ձանձրոյթն ու մալարիան: Խորիմաց վեհապետը մայ-
րաքաղաքին ու անոր «առաջին գօտին» վարչութիւնը
կը վերապահէր միայն ու միայն իր մարդերուն, բոլորն
ալ ամենագուհիկ ծագումով, բանակին ընդերքէն զեղ-
ծումով ու ստորնութեամբ իրենց մակաբոյժի յեղա-
շրջումը կատարած ու իբր մեծ, պսակաւոր անձնաւո-
րութիւն հասած մինչեւ կայսերական պալատ, թիրա՛խը՝
բոլոր բախտախնդիրներուն, հանած-վառածներուն ու
թուրք պատմութեան քաջածանօթ հերոսներուն, ենիչէրի
կամ նոր բառով՝ աւագանի, որոնք գիւղակի մը կառա-
վարչութենէն կամ տասնապետ զինուորի մը աստիճանէն
մինչեւ նախարարութիւն, եպարքոսութիւն, սպարապե-
տութիւն ճամբայ կը հարթեն, արժանիքէ դուրս ամէն
միջոցներով:

Արմաշական վարդապետին անձնական երաշխաւո-
րութեամբը անոնք շաբաթ մը հիւր մնացին առաջնոր-
դարան: Առաջնորդը Մաթիկին մէջ կ'ողջունէր այնքան
երկար ատենէ ի վեր կարօտուած խօսակիցը: Հակառակ
երիտասարդ տարիքին՝ իւրացուցած էր սա մենագարու-
թիւնը, խօսելու, առանց վիճաբանութեան (կէտը, որ անի-
կա կը զատուէր Մաթիկէն) հանդարտ ու համով: Այս
կարգի վարժութիւններ տարիքին հետ կը ստանան գա-
ւառներու եպիսկոպոսները: Անոնք իրենց ձանձրոյթը կը
պարպեն անվերջ դրուագումներով, միշտ մէկու մը
գլխուն, որ մտիկ կ'ընէ սրբազան յեղումը ու աւուաները
կը հիւսէ իրարու՝ յօրանջը խեղդելու համար: Երբեմն
հաճելի, սրամիտ լեզու մը կը խնայէ խեղճ տիրացուներու
կամ լուսարարներու գլխուն՝ սա նահատակութիւնը,